


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
Ս. ՓՈՐՈՍԵԱՆ
 ՎԱՍԻԿ ԿԱՐ ՈՐ ԵՒ Ե ԳՐՈՒԹՅՈՒՆ
 ՊԵՏԻ Ե ՈՐՂՂԵՒ, ՈՒՐ
 Խմբագրէ ԿՈՐՇԱՆՈՅՍ ԼՐԱԳՐԻ
 ԳԱՀԻՐԷ (Հասցեականիէ)



Rédaction du journal arménien
ARCHALOUICE
 HABBANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)

ԼՐԱԳՐԻ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ԾԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ
 ԵՒ ԳՐՈՒԹՅՈՒՆ
 Տարեկան, ողջ դանկն. 60
 Վեցամսեայ » 35
 ՕՏԱՐ ԵՐԿՐԵՐ
 Տարեկան Ձրանք 20
 Վեցամսեայ » 12
 ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐԻՆ ԿԱՆՆԻԿ Ե
 ԵՒ ԹՂԽՍԱՐԻ ԵՍԻՔԸ
 Խմբագրութեան վրայ:
 Խմբագրութեան ուղղուած
 գրութիւնք եւ չ'են տրուիր:

Ա.Ղ.Գ.

Արշաղոյնի Գահիրէքնակ յարգոյ ընթերցողաց կը ծանուցուի թէ՛ յետ այսու իրենց թերթերն փոխանակ չորեքշաբթի և շաբաթ նքեկոյն, պիտի ընդունին հինգշաբթի և կիրակիէ առաւօտները կանուխ: Խմբագրութիւնն այս փոփոխութիւնն ընելոց ստիպուած է օրերու կարճնալուն պատճառաւ:

Իսկ Աղեքնանդրիոյ և Եգիպտական միւս քաղաքներու յարգոյ բաժանորդներուն համար ո՛ր և է փոփոխութիւն չ'իւնիր սոցն կարգադրութեամբ:

Օրմանեան Պատրիարքի անուան յիշատակութեան խնդրոյ մասին Գահիրէի մէջ տեղի ունեցած միջադէպերու առթիւ «Արձե» նիւսն ստորագրութեամբ Ռեժոնալի Սեպտ. 30 և ժողովայ թիւ Գեղի Հոկտ. 3 թուականներով հրատարակած խիստ շահեկան յոգնուածին թարգմանութիւնը կը հրատարակենք ի ստորեւ:

ՕՐՄԱՆԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ

ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵԿԵՂԵՅՈՒՅՍ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

Թէպէտ տեղական մամուլը բաւական գրեց Օրմանեան Պատրիարքի անուան պատարագի մէջ յիշատակութեան խնդրին առթիւ Գահիրէի Հայոց մէջ վերջերս ծագած յուզումներուն վրայ, բայց թերթերէն ոչ մէկը ձեռնհասութիւն ցոյց տուաւ իրերը իրենց պարզութեան մէջ և իրենց իսկական գոյնովը ներկայացնելու: Մէկ քանի թերթեր, ինչպէս արաբական Ել-Մուգաքքամը, որ իր տեղեկութիւնները շատ կեղակարծ աղբիւրներէ քաղած կ'երևի, ախրող գըրգըութեան մէջ կ'ուզեն տեսնել հայկական խնդրի մատը և ազդեցութիւնը, և կը կարծեն թէ միայն հայ գաղթականներէ ստեղծուած դէպք մ'է այն, հայ գաղութին մէջ Երկպառակութիւն ձգելու և այդ կերպով տեղացի հայերու անդորրութիւնը վրդովելու նպատակով . . . : Մինչև իսկ հարուստ թերթերէն ոմանք իրենց հարուստ երևակայութեամբ, իշխանուհի նազը հանրմի խնդրին և Կ. Պոլսոյ հայ Պատրիարքին դէմ դժգոհութեան այս ցոյցերուն մէջ առնչութիւն մը նշմարեցին . . . :

Կ'երևի թէ այս մասին մէկ քանի

դժբաղդարար հայազգի— մութ անձնաւորութիւններէ Երկպառական կառավարութեան հաղորդուած տեղեկութիւններն ալ նոյնչափ խեղաթիւրուած են: Առանց այս ենթադրութեան դժուար պիտի ըլլար բացատրել քառասունի չափ հայերու թէև առժամեայ՝ բանտարկութիւնը, և իրենց արձակուելուն առթիւ եղած արտաքսուսի սպառնալիքները:

Արդ՝ մտքերը հանդարտեցնելու համար, կը փութանք ըսել թէ քաղաքական խնդիր մը չէ ասիկա, և ո՛չ ալ Եգիպտոսի ընդհանրական և նորեկ գաղթականներու միջև կարծիքներու անհամաձայնութիւն մը: Պարզապէս կրօնական խնդիր մ'է, որուն ծագումը Հայաստանեայց Եկեղեցւոյ հիմնական և անխախտ սկզբունքներուն մէջ պէտք է փնտռել:

Հայաստանեայց Եկեղեցին արմատապէս և էպպէս ուսմովարական հաստատութիւն մ'է: Այլապէս ըսելով, ցեղին բընածին ձգտումները կը ցոլացնէ Հէլլէններու հին հանրապետութեան «կառավարութիւնը ժողովրդիկ, ժողովրդիկ համար և ժողովրդով» նշանաբանը բառ առ բառ կը յարմարի Հայաստանեայց Եկեղեցւոյ հիմնը կազմող սկզբունքներուն: Յետին սարկաւակէն մինչև ամենայն Հայոց կաթողիկոսը, Եկեղեցական կազմակերպութեան բոլոր անդամները ընդհանուր քուէարկութեամբ կ'ընտրուին:— Երբ Ռիստուսի 37 թուին Թադէոս Առաքեալ Հայաստան եկաւ, Քրիստոնէութիւնը հաստատելու համար հոն՝ առաջին Եպիսկոպոսը որ ձեռնադրեց Եգիպտոս մէջ (հիմա Ուրֆա) Արգար թագաւորին սենեկապետը Արգէն եղաւ: Արգ՝ այս կրօնաւորը ժողովրդիկ իր ընտրելի ներկայացուած էր: (*)

Ձեռնադրութեան ատեն, այդ պաշտօնը կատարող Եկեղեցականը, երևք անգամ ներկայներուն կը հարցնէ թէ ձեռնադրելին արժանի՞ է. ներկայները բարձր ձայնով «Այո» կը պատասխանեն: Ժխտական մէկ ձայն միայն կը բաւէ որ արարողը

(*) Ուրեմն ի՞նչ պէտք է ըսենք Գահիրէի քահանաներուն, որոնք ո՛չ տեղական հայ ժողովուրդին քուէն ունին և ո՛չ ալ իրենց ձեռնադրութեան պահուն Գահիրէի հայերէն բարձր կամ ցած ձայնով «այո» ըսող մը կզած է:

թիւնը դադրի և խիստ լուրջ քննութիւն մը բացուի:

Այսպէս, Եկեղեցական մը, ինչ որ ալ ըլլայ իւր կարգը, երբ Եկեղեցին իրեն տուած պարտքերուն մէջ զանցառութիւն մ'ընէ, ժողովուրդը որ իրեն ի նպաստ քուէ տուած է, զայն պաշտօնանկ ընելու ամեն իրաւունքները կը վայելէ, կամ՝ յանցաւորին գլխաւորին հաղորդելով իւր գանգատները, կամ՝ Եկեղեցին գրկին մէջ իսկ բացարձակապէս յայտնելով իւր դժգոհութիւնը:

Գալով Կ. Պոլսոյ Պատրիարքներուն, որովհետեւ իրենց կրօնական կարգէն զատ քաղաքական հանգամանք մ'ալ կը կրնն իրենց վրայ, իբր աղի ին ներկայացուցիչ Բ. Գրան մօտ, կամ մեր օրերը՝ Վեհ. Սուլթանի մօտ, (ասիկա այն օրէն ար Բ. Գուրը Երջուրդ-Քէջի փոխադրուեցաւ) պատասխանատու են իրենց գործերուն Ազգին հանդէպ, Կ. Պոլսոյ Ազգ. ժողովոյ միջոցաւ, որը 120 երեսփոխաններէ կը բաղկանայ ք 80ը մայրաքաղաքին 200,000 հայերու ներկայացուցիչ, (այս թիւը անհերքելի էր շարդերէն առաջ) և մնացեալ 40ը կը ներկայացնեն Կայսրութեան զանազան դաւաճները:

(Մեղեցալը յայտնող քուով)

Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն

ԲԱՅ ՆԱՄԱԿ ՊԱՒՈՒՆԻ Տ. ԵՂՆԻԿ ԲԱՂԱՆԱՅԻՆ

Արեւոյսի 17րդ համարին մէջ կարգացի ձեր մէկ նամակը որով կ'անակնդ ազգագու Պատրիարքին և Գահիրէի Գաղաքական Ժողովի վեմաւում անդամներուն տուած՝ (որոնք ձեր և իրենց գաղափարներուն հակառակողները օտար լըրտեսներու և ոստիկաններու ձեռքով բանտարկութեամբ և ի հարկին երկրէն արտաքսուսով ալ կրնան պատժել) Բազարա ձեր յայտնի անուով և ստորագրութեամբ հրապարակ կ'իջնէք՝ հերքելու «արտաւոց գաղափարներ յայտնած ու գայթակղալից երեւոյթներու պատճառ եղած» ըլլալինդ, ինչպէս նաև «բացազանցութիւններ ու յոխորտանքներ թախած ըլլալինդ ձեզ զգացման հրաւիրող երիտասարդի մը»:

Ես որ ներկայ նամակը ձեզի ուղղելու պատիւը կ'ունենամ, ո՛չ «Քրիստ» ևս, որը հեգնութեամբ «ասարկու հերոս» կ'անուանէք և կը հարցնէք թէ ինչո՞ւ ծածկած էր անունը, ո՛չ ալ «Երուանդ» որը նոյնպէս կը մեղադրէք թէ «ինչո՞ւ զոնէ չէր նշանակած յոգնածին մէկ անկիւնը իւր ընակած փողոցին, տան սեղը, և թիւք, որպէսզի ոստիկան մը երբար . . . : Բայց ո՛չ, նև

րեցէք, Տ. Հայր, վերջին ձերբակալութիւններու թարմ տպագրութիւններու տակ սխալ օրինակներ եմ ձեր գրածը «Բանասէյ մը երբայր» գրած էք զուրք ըն կրորդ մեմ որ եղած դէպ երու ժամանակ եկեղեցին չէի. բայց գտնուելով ժողովրդի կամքին թարգման հանդիսացողներու, հանրագիր ստորագրողներու թուին մէջ, պարտականութիւն նկատեցի ձեզի այս նամակը գրելու. իսկական ստորագրութիւնս ձեզի հարկաւոր չի կրնար ըլլալ, քանի որ զուրք եւ ուրիշ ընթերցողները պէտք է գտնէք պարզած սկզբունքներուս եւ գաղափարներուս արդարացի եւ ուղիղ ըլլալը կամ չըլլալը եւ ոչ թէ փնտէք ո՛վ ըլլալս, որ խնդրին մէջ ո եւ է նշանակութիւն չկրնար ունենալ:

Տէր Հայր, շատ ցաւեցայ եւ արգահատեցայ ձեր վրայ, տեսնելով որ ձեր այդ գրութեամբը հաստատած էիք ինչ որ կ'ուզէիք հերքել եւ հերքած էիք ինչ որ կ'ուզէիք հաստատել:

Արդարեւ Եկեղեցւոյ մէջ արտառոց գաղափարներ յայտնած եւ բացազանչութիւններ ու յոխորտանքներ թախած չըլլալնիդ հաստատելու համար կ'եղնէք նորէն արտառոց գաղափարներ կը յայտնէք ու կարգ մը նոր բացազանչութիւններ ու յոխորտանքներ կը թափէք, յետոյ յաղթական կերպով կը հարցնէք թէ որո՞նք են այս բաներուս մէջ յոխորտանքներն ու արտառոց գաղափարները, որո՞նք են որ ժողովուրդին արգահատանք ազդեր են . . . :

Ու յետոյ Աստուածորդւոյն ալ ձեր բազմին արժանացած ըլլալը յայտնելով կը մխիթարուիք: — Ասիկա յոխորտանք չէ՞:

Ձեր գրութեան մէջ կ'ըսէք. «Եթէ այդպիսիներն են մեր ազգին փրկութեան առաջնորդները, յիշուի՛ չ'յիշուին որոշողները, երնէ՛կ մեզի»:

Ասիկա յոխորտանք մը չէ՞: Դուք այդ խօսքով (ձեր պաշտպանած Պատրիարքին պէս) արհամարհած չէ՞ք ըլլար արտասանմանի այն բաղմաթիւ հայ գաղութները իրենց քահանայներով, վարդապետներով եւ եպիսկոպոստներով եւ արտասանմանի Հայոց մամուլը իր ամբողջութեամբ, առանց բացառութեան, որոնք ամենքն ալ «յիշուի»ն որոշողներն ու զործադրողներն են, զուրք այդ խօսքով արհամարհած չէ՞ք ըլլար ձեր յաղաքի հայ հասարակութեան ստուար մեծամասնութիւնը որոնք, զուրք զուրք լաւ գիտէք, համակիր եւ համամիտ են յիշուի որոշումին: Դուք, Տէր Հայր, այդ ամէնէն խելացի՞ եւ խորիմաստ, այդ ամէնէն աւելի ազգասէ՞ր եւ եկեղեցասէ՞ր գրտնուեցաք, Գահիրէի մէկ քանի ամիսներով միասին. եթէ այդպէս է, ուրեմն մեզի ալ երնէ՛կ որ ձեր հովուական փարսխին մէջ կը գտնուինք . . . :

«Չիշուի» ի խնդիր հանողները միշտ փաստերով խօսեցան եւ երկար երկար յօդուածներով, հանրագրութիւններով եւ ուրիշ անհերքելի ապացոյցներով եւ անուրանալի իրողութիւններով մասնանի ըրին Օրմանեան Պատրիարքի ազգազու արարքները. նոյնպէս պատմական փաստերով ալ ցոյց տուին թէ իրենց ըրածը անօրինակ, նախընթաց չունեցող բան մը չէր որ առաջին անգամ տեղի ունենար Գահիրէի եկեղեցւոյն մէջ, այլ հնաւանդ սովորութիւն մը: Մէջտե՛ղն է նաեւ համբաւեւոր հեռագիրը որուն առթիւ թանկ պէս պահպանողական թերթ մը անդամ կը պատարակէ Օրմանեանը:

Իսկ զուրք եւ ձեզ իրենց գործիք ընող փոքրաթիւ ազաները՝ «չիշուի» ըսողներուն այդ անօրինակ իրողութեան զէմ ի՞նչ փաստեր բերիք: — Բայց արձակապէս ոչինչ, բայց միայն պատգամ, յոխորտանք, սպանալիք եւ փոխոս:

Ան ի՞նչ որ զուրք կ'ըսէք. «Իրեն ուխտեալ զինուոր տանն Աստուծոյ եւ Եկեղեցւոյն, Սրբազան խորհրդի ատեն եղած անպատեան տարածանքները յուղղութիւն անձեւու համար, իրաւունք ունէի, եւ ըրի, յղգուչութիւն եւ ի խաղաղութիւն հրաւիրելու այն թիւր ԳԵԱՑԳՈՎ, ՍՍԴՐՈՒՍԾ ՍԶԳԱՅԻՆՆԵՐԸ որ ՓՏՏԱԾ ԳԱՂԱՓԱՐՆԵՐՈՎ սողորուած կը գործեն, ԱԶԳՈՒԹԵԱՆ, ԴԷՄ հակասահմանադրական ընթացք մը բռնած»:

Ասիկա ալ յոխորտանք մը չէ՞:

Որո՞նք են այն քիւր գնացնով սաղարուած ազգայինները. անուշտ անոնց կ'ակնարկէք որոնք ժողովուրդի ամենաստուար մեծամասնութեան

կամբը արտայայտեցին, պահանջելով ազգադաւին յիշատակութեան զազարուածը:

Որո՞նք են այն փսսած գաղափարները որոնցմով տողորուած են եղեր այդ քիւր գնացնով ազգայինները: Փոխանակ յոխորտանքներ եւ՝ աւելի աստիճանով ըստ՝ հայտնաբերուող տեղացիներու ժողովուրդի զխուսն, բարեկրօն Տէր Հայր, ազգին եւ եկեղեցիին մեծ ծառայութիւն մը մատուցած կ'ըլլայիք բացատրելով այն փսսած գաղափարները որ ձերը չեն, այլ քիւր գնացնով սաղարուած ազգայիններունը . . . :

Փոխանակ մնամէ՞ յոխորտանքներու՝ լաւագոյն չէ՞ք ըլլար որ ջանայիք օրինական փաստերով ապացուցանել թէ ժողովուրդի՞նք մենք ընթացքն է հակասահմանադրական, մինչդեռ ժողովուրդը Օրմանեանի՞ արարքները եւ ձեզ թելադրող ու քաջալերող ամիրաներուն՝ ընթացքը կը նկատէ հակասահմանադրական, այն ալ ո՛չ թէ խօսքով, այլ գրական փաստերով:

Փոխանակ փրօցողուող յոխորտանքներու, ջանայիք ապացուցանել թէ ժողովուրդին այսօրուան շարժումը ԱԶԳՈՒԹԵԱՆ ԴԷՄ է: Արդարեւ, այս բացատրութիւնն ալ վերջերս շատ յիշուողուեցաւ Գահիրէի ազաններուն եւ եկեղեցականներուն կողմէ. ուստի թերեւս մեծ բարիք մը պիտի ընէին ժողովուրդին՝ բացատրելով թէ իրենք Ազգ, Ազգութիւն ըսելով ի՞նչ կը հասկնան. որովհետեւ կ'երեւի թէ այդ բաները մեր ըմբռնածէն բոլորովին տարբեր եւ մեզի անհասկանալի նշանակութեան մը կը գործածեն իրենք:

Յոխորտանք չէ՞ հապա ի՞նչ է եկեղեցւոյ մէջ ձեր ըրած ծանուցումին հետեւեալ ամփոփումն ալ որ կ'ընէք.

«Յիշեցուցի թէ Բրիտան. Եկեղեցին ինչպէս կը հրաւիրէ գիրենք ի համբողջ սրբութեան. թէ կը կոչէ ՍՈՒՎԱՑՈՅՆՆԵՐԻ Ի ձայն խաղաղութեան. (ուրեմն խռովայնոյց են անոնք որ ազգազու Պատրիարքի մը արարքներէն գայթակղած՝ չեն ուզեր որ իրենց պաշտամանը սրբաւարին մէջ յիշատակուի այդ անարժանին անունը). կ'ազգարարէ ձեռնադրել հաշտարար պատարագին դիմաց այն հաւատացեալոյ, որ վշտացուցեր են իրենց եղբայրները (բայց ամբողջ ազգը դառնացող ու անոր դարաւոր իրաւունքները ոտքի տակ առնող մէկուն անուան յիշատակութիւնը չարգելիք). որ քէն ու ռի, խէթ ու վրէժ կը տածեն զէպ ու ընկերն իրենց սրտերուն մէջ. (քէն ու ռի, խէթ ու վրէժ իրենց սրտին մէջ տածողները չիշուի պոռացողներն են թէ լրտես ու ոստիկան բերողները, անմեղներ բանտարկել տուողները եւ երկրէն արտաքսել տալու խոշոր սպանալիքն ընողները). հուսկ ուրեմն, թէ՛ կ'ազգարարէ, այո՛, ողջունի՞») ձայնը որ այդ պահուն այնպիսիները կ'ընեն սողորուս եկեղեցւոյն եւ այնպէս ազգութեն (իսկ լըբանները ներսը մնան), որպէս զի արդարութեան արկութիւնը չբերեն իրենց վրայ»: — Այս վերջին խօսքերով ալ իբր բարեկրօն քահանայ ուզած էք եկեղեցիէն առաջնել այն բոլոր հաւատացեալները որոնք Օրմանեանի անուան արտաքսումը կը պահանջէին:

Տէր Հայր, զուրք իրաւամբ կ'ըսէք ձեր նամակին մէջ. «Անհրաժեշտ պարտք կը դնէ ի մեզ Բրիտանոս. Չգալ գայթակղութեան, եւ ոչ իսկ գայթակղեցուցանել զմի ի փոքրկանցս ի մէնջ. եւ վա՛յ մարդոյն այնմիկ յոյր ձեռն գայցէ գայթակղութիւն»:

Այո՛, Տէր Հայր, գայթակղութիւնը եկած է. բայց զայն բերող եւ առով Բրիտանոսի վա՛յին արժանացող մարդը գիտէ՞ք ո՛վ է. — ձեր պաշտպանած Օրմանեան Պատրիարքն է: Երկրորդ գայթակղեցողները գիտէ՞ք որո՞նք են. — հայ եկեղեցւոյ ժողովրդական կազմակերպութեան եւ ազգական ոգիին զէմ մեղանշող խաւարամիտ կըղերականներն են. եկեղեցին լրտես եւ ոստիկան բերողներն են, իրենց ամիրայական կիրքերուն յագուող տալու համար անմեղները բանտ լեցնողներն են:

Ասո՞նք են որ եղած են՝ ձեր խօսքով՝ «աւետարանական վային երթակայն»:

(*) պէտք չէ մոռնալ նաեւ թէ 'եղբայրական սիրոյ ողջունին տեղ քահանայից կողմէն ապականեր կը տրուէին ժողովրդեան՝ այս կամ այն անհատին: Ծ. Խ.

Նամակս պիտի վերջացնեմ որդիաբար ձեզի մէկ քանի կէտեր յիշեցնելով, որոնք ապագային մէջ ձեզի օգտակար կրնան ըլլալ:

1. Յիշեցէք միշտ որ հեղութեան եւ խաղաղութեան սխալ Բրիտանոս «վա՛յ ձեզ դարաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց»ը արտասանեց, եւ, խնդրեմ, երբեմն երբեմն կարդացէք այդ ամբողջ հրաշալի յանդիմանութիւնները, որոնց մէջ է նաեւ կեղծ բարեպաշտներուն եւ շինծու խղճահարներուն ուղղութեամբ «զուրաս կլանէք եւ զմեզու կստանէք» խօսքը: Շատ հրահանգիչ ընթերցում մը կրնայ ըլլալ այդ ձեզ համար:

2. Յիշեցէք որ նոյն ինքն «երանի խաղաղարաց» քարոզող Բրիտանոսը օր մ'ալ «Տուն իմ տուն աղօթից կոչեսցի եւ զուրք արարէք զգա այս աւազակաց» պոռակով խարազանով տաճարէն դուրս վաճառեց հաստավաճառները եւ աղաւեսվաճառները, e tutti quanti, եւ անոնց սեղանները կործանեց:

(Բաղդաստեցէք, խնդրեմ, չիշուի պտուղ մեզմ միջոցը, որ ձեր բարեպաշտական զգացումները վերաւորեր է, Բրիտանոսի խարազանով կատարած այդ արտաքսումն բուն միջոցն հետաւր կը վախնամ որ այդ պարագային ելլէք Բրիտանոսն ալ արտաքսէք մեր եկեղեցիէն):

3. Ձեզ համար իբր օգտակար ընթերցում մը կը յանձնարարեմ նաեւ Մովսէս Ռորենացիի հրոչակաւոր Ողբում զեզ Հայոց աւխարհը որը, իբրեւ, թէեւ ձեզի պէս «երնէ՛կ» չի կարողար, բայց դարձեալ ձեզի համար հոգեշահ կրնայ ըլլալ եւ որուն մէջ Ռորենացին հետեւեալ խօսքերով կը գուշակէ «դառնել հովուաց ազիտաց»։ «Վարդապետք տխմարք եւ ընդինքնահատք, անձամբ առեալ պատիւ եւ ոչ յԱստուծոյ կոչեցեալ, արծաթով ընտրեալք եւ ոչ հողւով, ոսկեւէք, նախանձուք, թողեալ զհեզութիւն՝ յորում Աստուած քնակէ, եւ գայլք եղեալ՝ զիրեանց հօտ գիշատելով: Կրօնաւորք կեղծաւորք, անձնացոյցք, սրտախոտք, պատուասէքք քան թէ Աստուածասէքք. — վրձակաւորք հպարտք, դատասացք, դարասնք, ծայլք, անեցողք արուեստից եւ վարդապետական բանից, սիրողք վաճառաց եւ կատակերգութեանց»:

4. Թէպէտ պիտի ուզէի որ անգամ մ'ալ հրապարակ իջնելով այս բաց նամակին պատասխանէք, եւ տաք այն փաստերը եւ բացատրութիւնները որոնք ձեռնէ կը պահանջեմ. բայց եթէ ընդհակառակը նամակին պատասխան չառնեմ, աւելի զո՞ պիտի ըլլամ ու մխիթարուիմ. որովհետեւ ձեր խոհականութեան (եթէ չըսեմ ամօթահարութեան) ամենէն մեծ ապացոյցը եւ «ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ՝ ժողովուրդի հանգիստն ու խաղաղութիւնը չ'լրդուիլու» ձեր կնքած Ուխտն ու պայմանին գործադրութիւնը կը կայանայ ձեր լուրթեանը մէջ:

ԱՆԴԻՄԱԿ ՈՄՆ

Ընթերցողաց մասնաւոր ուշադրութեան կը յանձնարարեմք չորրորդ երեսի մէջ զըրուած ԵԿԱՒՕՅ ԵՒ ԸՆԿՆՐՈՒԹԵԱՆ Հոյկազեան նոր Փուռին յայտարարութիւնը :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Առջի օրը զարոցական պատանի մը խմբագրութեանս ներկայանալով յետագայ նամակը յանձնեց, որ տեղուս ազգային վարժարանին ողբալի ու խիստ անկերպարան վրձակին զէմ ջախջախիչ ամբաստանագիր մէ, ո՛ր կէ ընթերցողք անպամ մը եւս պիտի համոզուին թէ յիշեալ վարժարանին հոգաբարձու Պէյք ո՛ր տատիճան գիտակից է իւր պաշտօնին եւ եղած քննադատութիւնները հերքելու եւ երևույթները փրկելու համար ինչ հնարքներու կը գիտէ:

ԳԱՀԻՐԷ, 3 հոկտ. 99

Խմբագիր,

Ստորագրեալս Գալտեան վարժարանի բարձրագոյն կարգի աշակերտ, երկու տա-

րի ազգային դպրոցը յաճախելէ վերջ՝ տա-
րի մը եւս շարունակել ուղեցի . բայց հա-
մոզուելով որ եթէ հինգ տարի ալ երթա-
լու ըլլամ, գիտցածէս աւելի բան մը չպի-
տի կարենամ սովորիլ, որոշեցի արհեստի մը
ձեռնարկել ապագայ երաշխաւորելու և
ծնողացս նեցուկ մ'ըլլալու համար . Հագիւ
գործ մը գտեր էի՝ վարժարանին հոգա-
բարձու Ազն. Եւստոֆ պէյ Ազիզ զիս հա-
մոզեց ըսելով «մինչեւ որ կառավարական
դպրոցը բացուի մեր վարժարանը յաճախէ
յետոյ ես քեզ հոն կը հաստատեմ»:

Յուսալով որ Ազիզ պէյի պէս աղնուա-
չուք անձնաւորութիւն մը կարելի չէր իւր
խոստումը դրժել անկասկած սկսայ դըպ-
րոցս շարունակելու երբ իմացայ թէ կառա-
վարական դպրոցը մինչև սեպտ. 24՝ տղայք
արձանագրուելու պայմանաժամ ունին, ն.
Վսեմութեան ներկայացայ և խնդրեցի որ
պէտք եղածը կարգադրէ, առ որ պատաս-
խան ստացայ «իմ քեզ զրկելիք դպրոցս
կառավարականը չ'է այլ Սի.ք.ա-է-հատի-
տի արհեստանոցն է, որուն վերաբացման
դեռ ժամանակ կայ. դուք տակաւին դըպ-
րոցնիդ շարունակելու էք»։ Անցաւ ամիս մը
ևս, ն. Վսեմութիւնը հոկտ. 2ին դպրոց ե-
կաւ, վերջին անգամն ըլլալով յիշեցուցի ի-
րեն որ խոստումն ի կատար հանէ, եթէ ոչ,
հակառակ պարագային ո և է գործ մը գըրու-
նելու շնորհն ընէ։ Ատոր ալ պատասխանեց
«քանի որ դու արարեքն լաւ չես գիտեր,
անգղիերէնդ ալ աւարտած չես, ես ինչպէս
քեզի դործ գտնեմ, աւելի լաւ կըլլայ քա-
նի մը տարի ես շարունակեմ և երբ ուս-
մունքդ աւարտես ես քեզ համար կ'աշ-
խատեմ» — Բայց Պէյ, դուք զիս համոզած
ժամանակնիդ չէի՞ք գիտեր իմ արարեքնիս
անգղիերէնի մէջ ունեցած կարողութիւնս, —
սի և ահա իսպառ ուրացաւ իւր խոստու-
մը և բարկութեամբ մը վանեց զիս ընկեր-
ներովս, «եթէ կ'ուզէք կենալ՝ կեցէք, ա-
պա թէ ոչ գացէ՞ք» (նաղլա ինչոյ) ըսելով։

Հաճեցէք հրատարակել երկուողս ձեր
Արշալոյս լրագրի մէկ անկիւնը, որով պի-
տի լինիմ ձեզ միշտ երախտապարտ
ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Մեզ լուր կը տրուի թէ Գալատ. վար-
ժարանի Հոգաբարձուին կողմէ ապականա-
հար եղած աշակերտին քեռայրն երէկ Բա-
ղաք. ժողովոյ ներկայանալով գրաւորապէս
բողբած է և արդարութիւն պահանջած։
Ժողովը պատասխանած է թէ ինք այ-
ժըմ մեծամասնութիւն չունենալուն պատճա-
ռաւ չէ կարող զբաղիլ այդ խնդրով, և ա-
ռաջիկայ ուրբաթ օրուան նիստին յետա-
ձգած է։

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒՅՈՒՄ
Բաղաքիս հայ գերասանական խումբը
վաղը՝ կիրակի գիշեր՝ համակրելի ժողո-
վրդական բանաստեղծ Պետրոս Գուրանի
Սեի ՀՈՂԵՐ անուն ողբերգութիւնը պիտի
ներկայացնէ։
Բաւական տարիներէ ի վեր առաջին
անգամն ըլլալով այդպիսի ներկայացում մը
տեղի կ'ունենայ, որ կենդանի պատկերնե-
րով ցոյց պիտի տայ թէ վարեր առաջ մեր
նախնիք ալ մեզի պէս ունեցած են սե՛ւ

սե՛ւ օրեր։ Ինչպէս ազգայրին մէջ ըստ ամ-
է, ժամանակին խիստ յարմար ընտրութիւն
մ'ըրած է արդարեւ գերասանական խում-
բը։ Փափաքելի էր որ սոյն ներկայացումը
սկիզբն ըլլար ուրիշ հայերէն ներկայացում-
ներու շարքին, ինչպէս խոստացուած է։

Անշուշտ ենք թէ Գահրէի ազգայինք
պիտի ուզեն ըստ արժանւոյն քաջալերել
այդ զուտ ազգային ներկայացումը։

Թերթիս համակրելի Արտօնատէր և աշ-
խատակից Տ.ք.թ. Ա. Ս. Յակոբեանի նախա-
ձեռնութեամբ գաղթական ընտանիքի մը
մաս մը ձեռագործները վիճակահանու-
թեան դրուած են ի նպաստ յիշեալ կա-
րօս ընտանիքին։

Կը խնդրուի հայ հասարակութենէն որ
բարեսիրտբար հաճի նիւթապէս քաջալե-
րել սոյն բարենպաստակ ձեռնարկը ի վա-
ճառ հանուած վիճակահանութեան տու-
սերէն գնելով։

Իւրաքանչիւր տոմսի գինն է 2 դր-
ող և կը գտնուի Պատ. Կ. Մ. Տատրերանի
քով։

Ազեքսանդրիոյ ժողովրդական Գրա-
դարան-Ընթերցարանի վարչութիւնը խընդ-
րած է մեզմէ հրատարակել Ընթերցարանի
բացման առթիւ եղած հետեւեալ միանուագ-
նուիրատուութեանց ցուցակը։

Վարչութեան Պատ. անդամք, որոց ա-
նուններն ի մօտոյ առիթ պիտի ունենանք
տեղեկանալով հրատարակելու, իրենց մաս-
նաւոր շնորհակալիքը կը յայտնեն այն
ընթերցասէր ազգայնոց, որոնք իրենց նուիր-
ատուութեամբ խրախուսել փութացած են
սոյն ժողովրդական օգտաշատ ձեռնարկը։

- Տ. Տ. Հայկ Էքիզէր 80, Ոմն 200, Մխաք
40, Բարեպատակ 20, Բրիտանեայ 10, Ոմն 30,
Գ. Զպուքեան 10, Մայր Հայաստան 40, Տիկին
Շուշանիկ 40, Ոմն 40, Սղաւսէր 20, Զրաքեան 20,
Յ. Մուրաֆօֆ 100, Հ. Սանոսեան 20, Ոմն 40,
Ոմն, 40, Մուրաթ 6, Օ. Թ. 10, Ոմն 10, Ոմն 10,
Սարգիս Բիւրքեան 5, Սեդրաք Թաթոսեան 20,
Ոմն Պ. 10, Բարէլ 20, Ոմն. 20, Ոմն 10, Մկրտիչ
5, Ոմն Պ. 50, Ա. 10: Համագումար 945 դէկ. ողջ
եզիպտական։

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

... Խմբագիր,
Արեւալոյս Թերթի 16րդ թուոյն Ազգ. Լուրե-
րու բաժնին մէջ, հանրագրութիւնը մատուցանող
չորս անձէ բաղկացեալ պատգամաւորութեան մա-
սին յետագայ պարբերութիւնը կարգաւորվող փու-
թամ համապատասխանելու։

«Մանօթ հանրագրութիւնը Ազգ. Բաղաք. ժո-
ղովին ներկայացնող չորս պատգամաւորներուն
երկուքը գրաւորապէս պատասխանած են թէ՛ այլ
ևս աւարտած կը համարուի իրենց պատգամա-
ւորութիւնը։ Իսկ միւս երկուքը՝ որ գըջալով առ-
ջի օրէն իսկ իրենց ստորագրութիւնը ետ առած
էին, գարմանալի է որ իբր պատգամաւոր ներկա-
յացել են ժողովոյ»։

Մանօթ հանրագրութիւնը առաջին ստորա-
գրողներէն լինելով, ց'այս րոպէն զայն յարգած
և ց'վերջ ալ յարգելու ջանագիր պիտի լինիմ,
արդ' ուրեմն հոս կը մնայ միայն ինձ գարմանա-
լու թէ ի՞նչ ապացոյցներով պատիւս շօշափող
յարձակումներ կըլլուին, արդ' ուր ց'այդ հանրագրու-
թիւնը յարձակողներու կողմէ աչքէ անցուեցա՞ւ.
բացարձակապէս ո՛չ։ Բանգի յայտամ ստորա-
գրութեանս անաղարտութեանը հանդիպելով՝ փո-

խանակ սարսաւանքի դովաւանք կարգաւոր պի-
տի ստի գուշին, որ իրրեւ սկզբունքի սեր ց'յե-
տին կէտ անայլոյ յարգած եմ ստորագրութիւնս,
այս առթիւ կրկին ու կրկին հրաւէր կը կարգամ
հանրագրութեան վրայ հայեացք ձգելէ զատ, դի-
տողութեան անյ կը նաեւ արձանագրութեան տու-
մարն, ուր անջինջ կը մնան տակաւին հետեւեալ
գրուածքս. «Ժողովրդի կողմէն պատգամաւոր
ընտրուելէս ի վեր խոստածներուս ու գրածներուս
հանդէպ ամէն րոպէի իբրեւ պատասխանատու
պատրաստ եմ, ուր որ ալ ըլլայ, բացառութիւն
տալու»։ Գալով պատգամաւորական խնդրոյն,
կանխաւ ինձ ծանօթ լինելով 12 նորընտիր պա-
գամաւորներու գոյութիւնը, ժողովին յայտարա-
րեցի թէ «Ես այժմ չեմ ներկայացած իբրեւ պատ-
գամաւոր, այլ եկեր եմ անհատապէս իմ անկողմ-
նակալ հայեացքներս արգելու, ինչպէս որ ալ
ըրի, լաւագոյն կը լինէր, եթէ նորընտիր անգամ-
ներն հրաւիրելով անոնց հետ բանակցէիք»։

Արդ' այս անգամ բաւ համարելով այսչափով
անցնիլ, ուրիշ դիտողութիւնք ապագային կը վե-
րապահեմ, երբ, մասուանդ, վերջ գտնեն ժողո-
վրդեան մէջ վեճի նիւթ եղած խնդիրներն, որոց
անմիջապէս յետ կարգադրութեան՝ իմ անձին դէմ
եղած եւ լինելիք յարձակմանց հանդէպ յատաճ
պիտի բերեմ զօրաւոր փաստեր ամբոխին ծանօ-
թացնելու խումբ մը դիմակաւորներու եպիսկոպի
արարքը ի գգուշութիւն ապագային»։

ՏԱՐՈՆՑԻ ՄԻՆԻԹԱՐ ՍԷՑԷՐՅԱՆ
(Շահէն)

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

ԱԶԵՔՍԱՆԴՐԻՍ, ՄԻԹԻՆԿԻ Կարգադիր Յանձնա-
խումբ. — Հրատարակութեան համար մեզ զրկուած
միթիւնկի հաշուեցուցակին հետ տրուած նամակը,
մեզի ծանօթ ո՛ր եւ է ստորագրութիւն չը պարու-
նակէր. Հաշուեցուցակը հրատարակելի ընելու հա-
մար հարկ է որ այդ պակասը լրացնելու հաճիք։
Աւելորդ է ըսել թէ, պահանջուած ստորագրու-
թիւնը մեր քով պահելու համար է և ոչ թէ
հրատարակութեան տալու։

Դ Ե Ս Ո Ւ Դ Ե Ն

Ձինաստանի մէջ սովորութիւն է, որ
բժիշկները երեկոյ ըլլալուն պէս իրենց բը-
նակարաններուն դուռը ա՛յնչափ լապտեր
կախեն, որչափ հիւանդ որ մեռած է իրենց
տուած գեղերուն ու դարմաններուն հա-
կառակ։

Երեկոյ մը, Բեֆինի մէջ նորեկ եւ-
րոպացիի մը կինը կը հիւանդանայ։ Եւրո-
պային կը վազէ բժիշկ մը գտնելու համար.
սակայն չ'համարձակիր բաղիւնը բժշկաց և
ոչ մէկուն դուռը. վասն զի կը դողայ կը
սոսկայ՝ հարիւրաւոր լապտերներ տեսնելով։
Երկար ժամանակ քաղաքին փողոցներուն
մէջ պտրտելէ վերջը, միայն երեք լապտե-
րով դուռ մը նշմարելով՝ կ'սկսի ուրախա-
նալ և իսկոյն կը բաղիւն գուռը։ Բժիշկը
կ'արթննայ, կ'ընկերանայ եւրոպացիին, և
երբ եւրոպային կ'ըսէ. — հասկցայ որ քա-
ղաքին ամենաճալտար ու ամենափորձ բը-
ժիշկն էք, որով շետեւ ձեր տան դրանը
վրայ միայն երեք լապտեր տեսայ։ — Այո՛,
կը պատասխանէ բժիշկը հանդարտութեամբ,
իրաւունք ունիս, բայց ես տակաւին նոր

(*) Ձեր նամակը մեզի աւելի բան մը հասկը-
ցուցած ըլլալու համար հարկ էր որ տայիք անոր
անունը, որ ստորագրութիւնը ետ առած ըլլալուն
պատճառաւ, մեզ հաղորդուած լուրի մը հետեւա-
նօք ձեր անունն ալ անոր հետ խառնուած եւ պա-
տիւնիդ շօշափող յարձակումներ եղած էր։ Խ.

սկսայ բժշկութեան գործը, և տակաւին ե-
րեք հիւանդ դարմանեցի . . .

Վեց տարեկան աղջիկ մը օր մը հօրը
թեւերուն տակ մանեւրով կը հարցունէ.

—Հայրիկ, ձեր հարսանիքէն առաջ
այ կը ճանչնայիր մայրս:

—Ո՛չ զաւակս, կը պատանխանէ հայրը,
ուզեցի ճանչնալ մեր հարսանեաց առթիւ,
բայց այն ժամանակէն ի վեր տակաւին չի
կրցայ ճշմարտապէս ճԱՆՉՆԱԼ զինքն:

Սանտուիչ կղզեաց մէջ՝ դեղեցիկ կը
համարուի ա՛յն կինը, որոյ մարմնոյն ծան-
րութիւնն աւելի է. Ս. Գ.

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ Ի ԳԱՀԻՐԷ

ՔՐԵՔ ՃԻՐՉԻ ՔԱՅՆՈՒԱՍ
ՄԱՆՉԵՐՈՒ, ԱՂԶԱՆՑ ԵՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԻՉ

Մանչեքու դպրոցը կը գտնուի Անգղիացոց
վարժարանի շէնքին մէջ ի Պապ-էլ-Սալը:

Աղջկանց և Մանկապարտիզի համար զատ
տուն մը յատկացուած է, որ կը գտնուի ի Հօշ-էլ-
Շարֆազի, Տալուտիչ:

Փորձառու ուսուցիչներու միջոցաւ պիտի ա-
ւանդուին Հայերէն, Անգղիերէն, Փրանսերէն և
Արաբերէն լեզուները:

Մասնաւոր հոգածութեամբ ուժ պիտի արուի
Անգղիերէնը:

Մանկապարտիզի համար պատրաստ է մաս-
նազէտ և փորձառու վարժուի մը և մանկա-
պարտիզի վերջին մէթոտներով ու դրութեամբ
պիտի կրթէ մանուկները:

Մանրամասնութեանց համար դիմել, Տիար
Հաճի Փիլիպպոս Եպիսկոպոսի ի Մէնչիչէ:
14—15

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈ

Օրօգտի Պափ վանաւասան մօտերը, Կառէ-էր-Պեկաքի
հիւս զիմացը

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին յայտարարելու թէ, վերջերս
իրենց շոր բացած փուռին մէջ, անխարզաւ ա-
լիւրէ կը պատրաստուի ԳԱՂՂԻԱԿԱՆ, ԱՆԳՂԻԱ-
ԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հացեր: Սուր-
ճի, թէյի և կաթի պարսիմաններ, և այլն:

Եկաւօֆ և Ընկերութիւնն մեծ ջանք և
հոգածութիւն պիտի ունենան իրենց գիմող բոլոր
յաճախորդներն ըստ ամենայնի գոհացնելու:

Յանձնարարութիւնք ամենայն ճշգրութեամբ
և փութով կը կատարուին: 4—50

ՏԻԿԻՆՄԱՐԻ ՊՕՂՈՍ

Վկայեալ սեղական կառավարութեան և
բժշկական վարժարանէն

Իւր բնակութիւնը հաստատած է ի Շարա
Ապտիւլ-Ազիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզի
զիմացը:

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկու-
թեամբ ստացած փորձառութիւնը և տեղական
կլիմայի պահանջներուն մասին ունեցած գիտակ-
ցութիւնը կարեւոր առաւելութիւններ են:

Իրեն զիմողները կատարելապէս գո՛հ պիտի
մնան: 7—24

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

Վ.Ա.ԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

ՅՕՆՕԿՐԱԾ

ԳԱՀԻՐԷ, — Մուսի փողոց, — ԳԱՀԻՐԷ
Ս. և Ս. Սեֆնալիի վանաւասան զիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ
կը գտնուի պատի և ջօնսօյի ընտիր տե-
սակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷՔ ՀՈՆ և պիտի գտնէք ամէն ճա-
շակի յարմար զանազան տեսակ արանց և կա-
նանց ժամացոյցներ, աղամանդազարդ, ոսկի, ար-
ծար և ճիւղի:

Փրանսական և ամերիկեան ապրանքային ամ-
նաբնոր տեսակներէն զարդղէններ, շրթաներ,
օղեր, մասանիներ և այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն
կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն
ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ

20—50

ՏՕՐՓԻՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՍԱՄԼԱՐՈՅԺ
Ապսին, Եարէ Գուպրի, քիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հա-
սակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ
ակումներ:

Կը դադարեցնէ վայրկեանապէս ակուայի ցա-
ւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր
պատրաստած դեղերովն:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տե-
սակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակումներուն տոկունու-
թիւնն առ նուազն երկու տարուան համար
կ'երաշխաւորէ: 9—10

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ
Տայիբի Սանիթի հիւս զիմաց

Ամենաընտիր ապրանքներէ կը պատրաստէ
խիստ կոկիկ, հաստատուն և ճաշակաւոր կոշիկ-
ներ, արանց, կանանց և ողայոց համար:

Գիները չափաւոր և աման:
Փորձ մը միայն կը բաւէ: 12—24

ԳՐԻԳՈՐ ՊԵՇԻՐԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ

Պապար Մուրուր Թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խանութը
Շարա Մուրուրի փոխադրած է ի Պապար Մու-
րուր: Թրանսական նորածեւութեանց յար և նը-
ման կոշիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած
հմտութեամբ մինչև ցարդ գո՛հ ըրած է իրեն զի-
մող Պատ. յաճախորդներն:

Իւր գործածած ապրանքներով տոկունու-
թիւնն երբէք տարակոյս չ'վերցնէր:

Իրեն եղած յանձնարարութիւնք ո՛չ միայն
չափաւոր գներով, այլ և փութով և մեծ խնա-
մով կը պատրաստուին:

Դիմեցէք, եթէ կ'ուզէք ճաշակաւոր հագնել
և կոշտերէ (նասրը) ազատ մնալ: 15—24

ՀԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐԻԷ, ՎԷՔԱԼԷՑ-ԷՆ-ԱՍՄՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մաշի ներկ
(րաստրգ) սեւ, շագանակագոյն և ոսկեգոյն:
Սեւ ներկ շիշով վայրկեանապէս սեւցնող:
Սոյն ներկերու տեւողութիւնը մէկ ու կէս
ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ՋՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադարեցնէ և մա-
ղբոր կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տաղ)
գլուխները մաղ կը բերէ. 17 տարուան ճա-
ղատ գլուխներու վրայ փորձուած և հիւ-
նարի արդիւնք տեսնուած է: Շիշը 8 դր.
ողջ (2 Ֆրանք):

Ճերմկցնող լուր շիշով, որը մարմնոյն
բնական սպիտակութիւն կուտայ առանց
զգացնելու: Եզիպտոսի մէջ միակըք

Ակուայի փոշի և լուր. մին մաքուր և
ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ
պահող և ամրացնող:

Թող փութան ազատուիլ այն տնէինք՝ ու-
րոնց գլխու մաշիքն սկսած են տակաւ ձառ-
տակաւ թափիլ և օր մը ճաղատ բլլալու
վտանգին ենթարկուած են:

Կը դնենք, կը վաճառենք և կը փոխա-
նակենք բոլոր ազգաց գործածած նամա-
կադրոյցները: 8—8

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՄԱՏՈՒՆ

Ի ԳԱՀԻՐԷ

ՇԱՐԱ ՄՕԶԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր
առաւօտեան ժամը 7 էն մինչև երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր
Տպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի և
տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահագրեր, Հրահրագրեր, Այցեխարտեր, Ցանկեր,
Գիրքեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմսեր, Ընկերութեանց և
վաճառականներու սպագրական ամեն պիտոյցներ:

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոս-
տանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մաքրութեան,
ճշգրտագրութեան և գներու չափաւորութեան մէջ:

Եզիպտոսի ու է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները
ամենայն խնամք և փութով կը կատարուին:

Տպագրութիւն Ս. Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ

Le Gérant Dr S. A. HAGOPIAN